ՎՐԵԺ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Պետություն չունեցող ժողովուրդների ազգային - ազատագրական գաղափարախոսության դրոշը, որպես կանոն, տանում են եկեղեցին, ազգային կազմակերպությունները կամ էլ ազգային կուսակցությունները: Ուստի, ամենևին էլ պատահական չէր, որ հայ ազգային կուսակցությունները, որոնք կյանքի էին կոչվել հենց ազգային գաղափարախոսության դրոշակակիրը դառնալու հրամայականով, այդ գաղափարախոսությունը դարձրեցին իրենց պաշտոնական հավատամքը: Նրանք լուրջ ավանդ ունեն ազգային գաղափարախոսության հիմնադրույթների զարգացման ու տարածման, ինչպես նաև այդ հիմնադրույթներից բխող ռազմավարության ու նոր մարտավարական ծրագրերի ստեղծման գործում 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին:

Ազատագրական պայքարի նոր մարտավարությունը պետք է պատասխան տար այն հրատապ հարցերին, թե ինչպե՞ս պետք է կազմակերպվեր տարբեր պետությունների տիրապետության տակ գտնվող մասնատված Հայաստանի ազատագրումը, ազգային պայքարը ի՞նչ բնույթ պետք է ունենար՝ զինվա՞ծ թե խաղաղ, հայերը մենա՞կ պետք է պայքարեին թուրքական լծից ազատագրվելու համար, թե՞ պետք է ձեռք բերեին դաշնակիցներ, ինչպիսի քաղաքական կողմնորոշում պետք է ունենար հայ ժողովուրդը և այլն:

Մարտավարական կարևորագույն հիմնահարցերի այս խումբը, բնականաբար, միանգամից չէր կարող լուծվել, ուստի հայ ազգային կուսակցությունները, այդ թվում և արմենականները քննարկվող ժամանակահատվածում գտնվում էին համառ ու քրտնաջան որոնումների մեջ:

Հայտնի է, որ հայ իրականության մեջ ձևավորված առաջին քաղաքական կուսակցությունը դա Արմենական կուսակցությունն է, որը ձևավորվել է 1885 թվականին Վանում: Կուսակցության հիմնադիրներ են համարվում Մկրտիչ

Թերլեմեզյանը, Եղիշե Գոնդաքճյանը, Գալուստ Ասլանյանը, Գարեգին Բաղեշցյանը, Ղևոնդ Խանջյանը և ուրիշներ[1]:

Անուշավան Տեր-Մկրտչյանի վկայությամբ, 1890-ական թվականների սկզբին միայն Վանի վիլայեթում իրենք ունեին 150-ից ավելի խմբեր՝ յուրաքանչյուրում 12 մարդ: Կուսակցությունն ուներ նաև նյութական ու բարոյական օժանդակողներ, որոնց թիվը նույն Ա. Տեր-Մկրտչյանի վկայությամբ հասնում էր 178-ի[2]:

Արմենականները սկզբնական շրջանում քարոզում էին իրենց նախընտրած օրգան՝ Մկրտիչ Փորթուգալյանի խմբագրությամբ լույս տեսնող «Արմենիայի» գաղափարները: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ինքը՝ Մ. Փորթուգալյանը, քարոզելով արևմտահայ բոլոր խավերի ու դասակարգերի մասնակցությամբ հեղափոխական թեզեր, միևնույն ժամանակ դեմ էր արտահայտվում կուսակցությունների, այդ թվում և արմենականների գոյությանը: Հիմնադրելով կուսակցությունը, արմենականները 1888, 1890, 1892 թվականներին և հետո, էլի մի քանի անգամ դիմել են Մ. Փորթուգալյանին՝ խնդրելով ղեկավարել իրենց, բայց «Արմենիայի» հիմնադիրը հետևողականորեն մերժում էր բոլոր այդ առաջարկները, «համարելով դա վնասակար և խիստ վտանգավոր տաճկահայոց շահերին»[3]:

1880-ական թվականների վերջերին, արմենականներն իրենց գործունեությամբ մեծապես նպաստել են արևմտահայության շրջանում կուլտուրկրթական գործի խթանմանը, ինչպես նաև ազատագրական գաղափարների մշակմանն ու տարածմանը: Անգամ նրանց գաղափարական հակառակորդները ստիպված էին խոստովանել, որ արմենականների «անունը միշտ պետք է հիշվի», քանի որ նրանք ունեցել են «մեծ վաստակ, մանավանդ վասպուրականցիի կրթական մակարդակը բարձրացնելու տեսակետեն»[4]:

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.427, ց. 1, գ.5, թ.5, գ. 27, թ.1:
[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.427, ց. 1, գ.26, թ.1-7, գ.28, թ.1:
[3] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.427, ց. 1, գ.4, թ.13:
[4] Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ.2, Լոս Անժելես-Գալիֆորնիա, 1952, էջ 357:

Միայն 1890-ական թվականների կեսերին արմենականները ստեղծեցին իրենց ծրագիրը, որն առաջին անգամ հրատարակվեց «Երկրի ձայնում», 1907 թվականի դեկտեմբերի 29-ին, իսկ հետագայում՝ նաև տարբեր հուշագրություններում ու պարբերականներում: Ծրագրի անմիջական հեղինակ է համարվում Մկրտիչ Թերլեմեզյանը: Ծրագրում արմենականներն իրենց հիմնական խնդիրն էին համարում թուրքական բռնապետությունը տապալելու նպատակով ժողովրդին ոտքի հանելը: Ծրագրում մերժվում էին մասնակի ցույցերն ու ելույթները, համարելով դրանք վնասակար արևմտահայության ազատագրման գործում: Արմենականների խորին համոզմամբ բաղձալի նպատակին հասնելու միակ միջոցը համընդհանուր զինված ապստամբությունն էր, կամ հեղափոխությունը, որն անհրաժեշտ էր կազմակերպել նախապես, ժողովրդի մեջ տարածել հայրենասիրական գրականություն, քարոզել կուսակցության նպատակները, արթնացնել ժողովրդի մեջ ազգային ինքնագիտակցությունը, ստեղծել զինյալ խմբեր և այլն: Այդ աշխատանքների ավարտից հետո միայն, հաշվի առնելով նաև արտաքին հանգամանքները, պետք էր սկսել հեղափոխությունը: Ահաբեկչության նկատմամբ արմենականներն այն կարծիքն էին հայտնում, թե «...ստիպողական պարագաների մեջ ներելի են»[5]:

Արևմտյան Հայաստանի ազատագրման մարտավարական ծրագրի կարևորագույն հիմնախնդիրներից մեկը, քրդերի հետ ազատագրական պայքարի միասնական ճակատ կազմելու հարցն էր: Այլ կերպ ասած, պետք է պատասխան տրվեր այն հարցին, թե կարող է արդյոք արևմտահայությունը ազատագրվել թուրքական լծից միայն իր ուժերով, թե պետք է ստեղծվի թուրքերի կողմից նվաճված ժողովուրդների միասնական ճակատ: Արմենականները փաստորեն մերժում էին այլ ժողովուրդների հետ դաշինքի ստեղծման հնարավորությունը, իրենց ծրագրում ամրագրելով այն դրույթը, թե «...հայ ազգի և մյուս ցեղերի մեջ զգացման, աշխարհայեցողության, պահանջների և զարգացման մեծ տարբերություններ կան, որով հայ ազգի

---

[5] Համբարյան Ա. Ս., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908թթ.), Եր., 1999, էջ 112:

հեղափոխական շարժումը կարող է դանդաղել և կնճռոտել»[6]: Չնայած դրան, արմենական կուսակցության առանձին անդամներ, այնուամենայնիվ կողմնակից էին քրդերի հետ համաձայնության գալուն, պնդելով թե «տաճկական կառավարությունն արդեն փտած է, իսկ քյուրտերը մեր առաջին հաջողություններում վրա մեր կողմը պիտի անցնին»[7]:

Մեր կողմից, անդրադառնալով հայ-քրդական դաշինքի հարցին, չենք կարող չնշել հետևյալ կարևորագույն գործոնները.

1. Թուրքերը և քրդերը հայերի դեմ գործում էին ձեռք-ձեռքի տված: Դեռ ավելին, եթե հայերի կոտորածներն ու ցեղասպանությունը ծրագրավորվում էին թուրքերի կողմից, ապա դրանք հիմնականում իրականացնում էին քրդերը և հաստատվում հայկական գյուղերում:

Այսպես Անդրանիկը հիշում էր, որ քրդական աղաները երկու դարերի սահմանագլխին թափանցել էին Սասունի լեռնային շրջանները և տիրացել Տալվորիկին, Գելիեգուզանին, Մերկերին, Շենիքին, Սեմալին և այլ գյուղերի ու բնակիչների հանդեպ գործադրում էին «ամեն տեսակ բռնություն»[8]:

Բերված փաստը մեկ անգամ ևս վկայում է, որ քննարկվող ժամանակահատվածում քրդերը հայերին իրենց բնակության վայրերից տեղահանելու և այնտեղ հաստատվելու լուրջ մտադրություններ ունեին:

2. Քրդերը ոչ միայն 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, այլև Մեծ եղեռնից հետո մինչև մեր օրերը, փաստորեն, չփորձեցին լրջորեն հայերի հետ բանակցությունների սեղանի շուրջը նստել, որովհետև նրանց պահանջած Քրդստանը ընդգրկում է ամբողջ Արևմտյան Հայաստանը, իսկ որոշ քրդական շրջաններ պահանջում են անգամ Հայաստանի Հանրապետության քրդաբնակ շրջանները[9]:

Բավարար ուշադրություն չդարձնելով հիշյալ գործոններին, հայ

---

[6] Ծրագիր Արմենական կուսակցության, տե ս Հուշեր Արմենակ Եկարյանի, Պեյրութ, 1985, էջ 245:

[7] Երամյան Հ., Հուշամատյան Վան-Վասպուրականի, հ.Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 352:

[8] Անդրանիկի հուշերը, Պեյրութ, 1935, էջ 265, 317, 401:

[9] Խուրշուդյան Լ.Ա., Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., 1999, էջ 99:

պատմագրությունը տասնամյակներ շարունակ պաշտպանել է այն թեզը, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ-քրդական դաշինքը չի կայացել, որովհետև քրդերը դեռևս չէին հասունացել և չէին հասել օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի միացյալ ճակատի ստեղծման գաղափարին: Մինչդեռ, լուրջ մտորումների տեղիք է տալիս Լ.Ա.Խուրշուդյանի այն պնդումը, թե «հայ-քրդական դաշինքի չկայացման պատճառները բոլորովին այլ էին»: «Հարցն այն է, - գրում է Խուրշուդյանը, - որ քրդերը ավելի հեռու էին նայում, քան հայերը: Հայ-քրդական դաշինքի դեպքում կազատագրվեր Արևմտյան Հայաստանը և այդ տարածքում կստեղծվեր ոչ թե քրդական, այլ հայկական պետություն: Իսկ քրդերը, մի քանի հարյուր տարի ապրելով Արևմտյան Հայաստանում, այն արդեն դիտում էին որպես սեփական հայրենիք»[9]: Դժվար է ասել, արմենականները գիտակցում էին այս ամենը, թե ոչ բայց, ամեն դեպքում, մենք լիովին կիսում ենք հայ-քրդական դաշինքի անհրաժեշտ լինելու մասին նրանց պնդումը: Արմենականները մերժում էին նաև թուրքական ընդդիմադիր ուժերի հետ դաշնակցելու գաղափարը: Նրանց ծրագրային դրույթները քննարկելիս՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ արմենականները հատուկ նշանակություն էին տալիս 1905-1907 թվականներին Ռուսաստանում ծավալվող հեղափոխական իրադարձություններին՝ դրանք համարելով կարևոր՝ արևմտահայության ազատագրման համար: Ավելին, արմենականների ծրագրին 1906 թվականին կցված Սեպուհի հավելվածում նշվում էր, որ Ռուսաստանում սպասվելիք հեղափոխությունը պետք է լինի նաև արևմտահայության հեռավոր նպատակը: «Ընկերային, սոցիալիստական հեղափոխությունը,-կարդում ենք հավելվածում,- մեր իրականության հետ կապ ունեցող հեռավոր գաղափարն է, որին պետք է ձգտինք ապագային, երբ որ քաղաքական կարգերի և տնտեսական պայմանների շնորհիվ առաջ կուգա մեր մեջ նոր հասարակություն նման եվրոպական հասարակության, այսինքն՝ երբ սկսի աշխատանքի և կապիտալի

---

[9] Խուրշուդյան Լ.Ա., Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., 1999, էջ 98:

պայքարը մեր մեջ»[10]: Այս թեզն արդեն նորություն էր՝ ծրագրի հետ համեմատած:

Արմենականների բուն ծրագրի համեմատությամբ, Սեպուհի հավելվածում մյուս նորությունն այն էր, որ արևմտահայության ազատագրման հարցը հնարավոր էր համարվում լուծել արդեն համաօսմանյան հեղափոխության միջոցով, դաշնակցած հարևան թուրքերի, քրդերի, ասորիների և այլոց հետ[11]:

Արմենականների մի մասի համոզմամբ հայ մտավորականությունը պետք է տիրապետի սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսությանը՝ որպես հասարակական-տնտեսական գիտություն, որպես ոգևորող ու առաջ մղող ուժ և առաջնորդվի «եղբայրության, արդարության և հավասարության բարձր իդեալներով»[12]:

Այսպիսով, միանգամայն ակնհայտ է դառնում, որ 1905-1907թթ. Ռուսաստանի առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ազդեցության տակ արմենականները ձեռնամուխ են եղել սոցիալիստական գաղափարների տարածմանը, իրենց կուսակցության հեռավոր նպատակը համարելով սոցիալիստական հեղափոխությունը: Սակայն, սխալ կլինի կարծել, թե 1906 թվականին արմենականների ծրագրին կցված հավելվածի հեղինակը՝ Երվանդ Քեոսյանը (Սեպուհ), իր համոզմունքներով սոցիալիստ էր և քարոզում էր սոցիալիստական գաղափարներ: Բանն այն է, որ Ռուսաստանի առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության տարիներին սոցիալիզմի ու ժողովուրդների համատեղ պայքարի դրույթները հայ իրականության մեջ տարածում էին գտել և Սեպուհն, ամենայն հավանականությամբ, քարոզում էր դրանք՝ ժողովրդական լայն զանգվածների շրջանում իր կուսակցության դիրքերն ու հեղինակությունն ամրապնդելու նպատակով:

Արմենականների ծրագրային դրույթները իրենց արտացոլումն են գտել նաև նրանց ամերիկյան մասնաճյուղի օրգան «Արաքս» պարբերականում, որը հրատարակում էր Հովհաննես Հակոբյանը սկզբում Բոստոնում (1905-1906)

---

[10] Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 171:
[11] Նույն տեղում, էջ 172-173:
[12] Նույն տեղում, էջ 171-172:

որպես շաբաթաթերթ, իսկ հետո Նյու Յորքում (1907) որպես ամսաթերթ: Պարբերականի կարծիքով հայ ժողովրդի ազատագրական պայքարի անհրաժեշտության գաղափարը համազգային բնույթ կընդունի միայն այն ժամանակ «երբ ամբողջ ժողովուրդ մը կհասկանա իր վիճակին իրականությունը գիտակից կըլլա իր վզին ծանրացող լծի ծանրությունը, և դժգոհության ոգին այնքան կզարգանա, որ մահը կնախընտրե գերութենէ, ան ատեն ալ հրդեհը չի մարիր»[13]:

Պարբերականի կարծիքով, հայ ժողովրդի ինքնապաշտպանության ու ազատագրության հարցերի լուծումը կհեշտանա այն ժամանակ, երբ կուսակցությունները կթողնեն իրար դեմ մղվող պայքարը և միասնաբար կլծվեն ընդհանուր գործին: Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ էր նախապես ստեղծել գաղափարական համերաշխություն, ընդ որում, ոչ թե բռնությամբ, այլ ազատությամբ և անկաշկանդ ընտրությամբ: «Գաղափարի ազատություն տվեք ամենին,-գրում է «Արաքսը», - ատով միայն պիտի կրնանք իրար միանալ»[14]: Միևնույն ժամանակ, «Արաքսն» արդարացնում էր հայ իրականության մեջ բազմաթիվ կուսակցությունների առկայությունը. «Մենք հակառակ չենք կուսակցությանց գոյությանը, - գրում էր պարբերականը,- կուսակցությունները պետք է որ ապրին, քանի որ գաղափարի ու մտածումի միօրինակությունն անկարելի է, և չէ եղած պատմական շրջան մը ու չի կրնա ըլլալ օր մը, որ մարդիկ մեկ տեսակ մտածեն»[15]:

Պարբերականը դեմ էր այն արատավոր պրակտիկային, երբ այդ կուսակցությունները թողած ժողովրդի փրկության խնդիրները, զբաղվում էին միմյանց վարկաբեկելով և ասպարեզից դուրս մղելով: «Արաքսը» կոչ էր անում վերջ տալ «երկպառակության ու ատելության որոմը սերմանելու» քաղաքականությանը[16]: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն «Արմենիայի», «Արաքսը» Արևմտյան Հայաստանի ազատագրումը հնարավոր էր համարում նաև խաղաղ ճանապարհով: Պարբերականում նշվում էր, որ

---

[13] Արաքս, 1905, թիվ 6, էջ 43:
[14] Նույն տեղում, 1905, թիվ 2, էջ 10:
[15] Նույն տեղում, թիվ 4, էջ, 25:
[16] Արաքս, 1905, թիվ 5, էջ 34:

արևմտահայության փրկության «թե հեղափոխական և թե ոչ հեղափոխական անվան տակ եղած ձեռնարկներուն համակիր հանդիսացանք»: Արաքսի կարծիքով հայության ազատագրության հարցում եվրոպական երկրների օժանդակությունն անհրաժեշտ է, քանի որ նա ի վիճակի չէ իր համար «մեն մենակ ազատություն ձեռք բերել»[17]: Միևնույն ժամանակ, միանգամայն իրավացիորեն այն կարծիքն էր հայտնվում, որ եվրոպական խոշոր տերությունները կօգնեն հայերին, եթե այդ պահանջի նրանց շահը:

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում նաև «Արաքսի» հրապարակումները կոմունիստական կամ ընկերվարական գաղափարների վերաբերյալ: Նշելով, որ ընկերվարությունը ձգտում է վերջ դնել «մարդու անիրավությանը մարդու դեմ», այնուհետև այն կարծիքն է հայտնվում թե «շնորհիվ այդ վեհ գաղափարի ընկերվարության ուսմունքը գնալով ավելի ու ավելի լայն տարածում է գտնում աշխարհում, ներառելով իր մեջ գիտակից ու քիչ գիտակից զանգվածների, բանվորների ու այլ խավերի»[18]:

Միևնույն ժամանակ, քննադատվում էին բոլոր նրանք, ովքեր մերժում էին ընկերվարությունը: Նշվում էր նաև, որ այդ ուսմունքը չի կարող հաստատվել «բոլորովին անսպասելի»: Այն կգա «աստիճանաբար, տևական գործընթացների հաղթահարումների ճանապարհով, հեղափոխությամբ կամ առանց հեղափոխության»: Ամփոփելով իր պատկերացումները կոմունիզմի մասին, «Արաքսը» նշում էր, որ «Ընկերվարությունը կպահանջե, որ արտադրությունը կենտրոնանա ժողովրդի քվեով ընտրված կառավարության մը ձեռք, որով մրցումը բոլորովին պիտի վերանա, աննպատակ ու անգործածական արտադրությունը պիտի դադրի ու մարդկային ընկերությունը ընդհանրապես պիտի կարողանա արդարությամբ օգտվիլ արտադրելի այն ամեն բարիքներեն, ինչ որ բնությունը առատորեն շնորհում է ընկերությանը»[19]:

Վերը նշված փաստերը վկայում են, որ «Արաքսն» իր էջերում արծարծելով մարքսիզմի որոշ հիմնադրույթներ, այս կամ այն չափով

---

[17] Նույն տեղում, 1906, թիվ 46, էջ 362:
[18] Նույն տեղում, 1905, թիվ 2, էջ 10:
[19] Արաքս, 1905, թիվ 9, էջ 69:

նպաստում էր իր ընթերցողների շրջանում այդ ուսմունքի քարոզչությանն ու տարածմանը: Սակայն, ընդհանուր առմամբ, արմենականներն իրենց գործունեության հիմնական նպատակն էին համարում արևմտահայության ազատագրումը թուրքական լծից համընդհանուր ապստամբության միջոցով: Այդ գերխնդրի իրագործման համար արմենականներն անհրաժեշտ էին համարում.

1. ժողովրդին զինակրթության և կարգապահության վարժեցնել, զենք ու դրամ հայթայթել, զինված խմբեր պատրաստել:

2. ժողովրդի մեջ հարենասիրական, հեղափոխական գրականության միջոցով արթնացնել հայրենասիրական ոգին:

3. Ազատագրական պայքարին մասնակցել միայն այն ժամանակ, երբ հեղափոխությունն արդեն հասունացած կլինի, իսկ ժողովուրդը պատրաստ՝ զենքը ձեռքին դուրս գալ ռազմի դաշտ[20]:

Վերջին ծրագրային թեզով, փաստորեն, արմենականները հայտարարում էին, որ իրենք ազատագրական պայքարին մասնակցելու են միայն այն ժամանակ, երբ համոզված կլինեն, որ հեղափոխությունը արդեն հասունացել է, և ժողովուրդը պատրաստ է զենքը ձեռքին դուրս գալ ռազմի դաշտ: Իսկ դա գործնականում նշանակում էր, որ Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները, որոնք 19-րդ դարի վերջերին արդեն պայքարի դրոշ էին պարզել, մենակ էին գործելու: Իսկ դա, հայ իրականության ծանրագույն պայմաններում, միանգամայն անթույլատրելի երևույթ պետք էր համարել: Անցնելով արմենականների պրակտիկ գործունեությանը, նշենք, որ 1896թվից հետո նրանք կրկին ակտիվացան: Այսպես, Վանի վարժարանի տնօրեն Եղիշե Գոնդաքճյանը, հավաքելով կոտորածներից փրկված կուսակցական ուժերին փորձեց նոր հունի մեջ դնել կուսակցության աշխատանքները և, նույնիսկ, մշակեց գործողությունների կոնկրետ պլան: Սակայն, ցավոք, այդ պլանը չիրագործվեց, քանի որ 1899 թվականին նա մահացավ[21]:

Չնայած դրան, աշխատանքներն, այնուամենայնիվ, շարունակվեցին: Այս անգամ գործի գլուխ կանգնեցին Գրիգոր Պեռզիկյանը, Արմենակ

---

[20] Ծրագիր Արմենական կուսակցության, տե՛ս Հուշեր Արմենակ Եկարյանի, Պեյրութ, 1985, էջ 248-129:

[21] Արմենիա, 1899, 17 մայիսի:

Եկարյանը, Երվանդ Քեռոյանը: Ակտիվ դեր կատարեցին նաև պատանիները, որոնք սկսեցին համալրել կուսակցության շարքերը: Այսպես, կուսակցությանն անդամագրված Անուշավան Տեր-Մկրտչյանն իր հուշերում նշում է, որ «Ընդհանուր խանդավառությունը սկսվեց պատանիներու կողմե» և, որ նրանցից 4-5 հոգի հավաքագրեցին եռանդուն երիտասարդների և «կազմեցին 12 խմբեր»[22]: Արտակ Դարբինյանի վկայությամբ ևս, Վան-Վասպուրականում առաջվա նման «կային խմբեր և խմբապետական ժողովներ, կկատարվեին թղթակցություններ արտասահմանին հետ...»[23]:

1908 թվականի սկզբներին, դավաճանության հետևանքով թուրք զինվորների կողմից Երվանդ Քեռոյանի (Սեպուհ) սպանությունից հետո, Վան-Վասպուրականի արմենականների դիրքերը զգալիորեն թուլացան: Զգալով, որ սեփական փոքրաթիվ ուժերով անկարող են իրագործել իրենց ծրագրային հիմնադրույթները, արմենականները գնալով ավելի ու ավելի էին մերձենում վերակազմյալ հնչակյաններին, իսկ արդեն երիտթուրքերի հեղաշրջումից հետո արմենականները վերջնականապես միավորվեցին վերակազմյալ հնչակյաններին՝ արևմտահայ իրականության մեջ հիմք դնելով «Հայ սահմանադրական ռամկավարների կուսակցությանը»[24]:

---

[22] ՀՀ ՊԿՊԱ, ֆ.427, ց.1, գ.21, թ.5:

[23] Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 129:

[24] Համբարյան Ա.Ս., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908թթ.), Եր., 1999, էջ 117: